

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹՐԵՆԻՆԳԻ ԿԻՐԱՌԱՆ  
ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՂՐՏՈՒՄ\***

**Արմինե Ալոյան**

Ուսուցման ժամանակակից, իննովացիոն ծևերի կիրառումը՝ սկսած նախադպրոցական կրթական համակարգից մինչև բուհական և մասնագիտական կրթություն, ժամանակի պահանջ է: Այս կրտսեքսոտում առաջարկում ենք կրթության ոլորտում կիրառել հոգեբանական թրենինգները: Ուսուցման այս ծևի հանդեպ հետաքրքրությունը վերջին տարիներին գնալով մեծանում է: Ուսուցման տվյալների՝ դասախոսությունների, քննարկումների, գործնական պարապմունքների կողքին հոգեբանները բացահայտել են մի նոր աշխարհ: Խմբում հոգեբանական թրենինգների կիրառմանն անդրադառնալով՝ S. L. Բուկան և U. I. Միտրոֆանովան համարում են, որ հոգեբանական թրենինգները դարձել են հետաքրքրի մի արկած հոգու և մտքի համար՝ զբաղեցնելով իրենց արժանի տեղը ուսուցման ակտիվ ծևերի շարքում [1]: Հոգեբանական թրենինգի արդյունավետությունը կայանում է նրանում, որ ուսուցման այս իննովացիոն մեթոդի հիմքում ընկած է խմբային հոգեբանական աշխատանքը: Հանդիսանալով ակտիվ խմբային հոգեբանական մեթոդ՝ հոգեբանական թրենինգը ծագեց և զարգացավ խմբային մեթոդների զարգացման ձանապարհին: Հենց խմբային մեթոդների հանդեպ հետաքրքրության աճի պայմաններում էլ մինչ այդ կատարված աշխատանքների ու արձանագրված ծեռքբերումների հիմն վրա, U. Ֆորվերգի ղեկավարությամբ մշակվեց մի մեթոդ, որն անվանեց սոցիալ-հոգեբանական թրենինգ: Թրենինգի միջոցներ են համոդիսացել դերային խաղերը դրամատիզացիայի տարրերով, որոնք պայմաններ են ստեղծում արդյունավետ հաղորդակցական ունակությունների ծևավորման համար: U. Ֆորվերգի կողմից մշակված գործնական ոլորտը հանդիսացավ արդյունաբերական արտադրության ղեկավարների, սոցիալ-հոգեբանական պատրաստումը:

Այսօր այդ մեթոդն ակտիվորեն օգտագործվում է տարրեր ոլորտներում հատկապես սոցիալական հոգեբանության հետ սահմանակից բնագավառներում, օրինակ, խմբային հոգեբերապիայում [2] և օտար լեզուների հնտենսիվ ուսուցման ժամանակ: Բացի այդ՝ այս մեթոդի արդյունավետությունն ապացուցվել է նաև ընտանեկան հարաբերությունների շտկման, դեռահասների աղաւտացիայի հարցում:

L. A. Պետրովսկայան, համարում է, որ հոգեբանական թրենինգները /Վարժանքներ/, մասնավորապես սոցիալ հոգեբանական վարժանքները, իրենց մեջ ներառելով բնական և լարուատոր գիտափորձի տարրեր հանդիսանում են հոգեբանական ազդեցության արդյունավետ միջոցներ, որոնք թույլ են տալիս լուծել խնդիրների լայն շրջանակներ, այդ թվում նաև շիման մեջ կոմպիտենտայնության ոլորտում, քանի որ շիմել կարելի է սովորել միայն շիմելով [3]:

\*Հոդվածն ընդունվել է 16.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

## ՄԵՐԵԿԻ ՄԱՀՍՈՏ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Թրեմինգմերի՝ որպես հոգեբանական ազդեցության արդյունավետ միջոցի հանդեպ հետաքրքրության մեծացումն հանգեցրեց նրան, որ այսօր այս մեթոդն ունի տարրեր տեսակներ, որոնք իրարից տարբերվում են թե կիրառման առանձնահատկություններով, թե ազդեցության օբյեկտով և այլն: Այդ տարբերություններն արտացոլվում են նաև թրենինգի բնութագրություններում: Լ. Ա. Պետրովսկայան իր աշխատություններում սոցիալ-հոգեբանական թրենինգը դիտարկում է որպես միջանձնային հարաբերություններում գիտելիքների, սոցիալական դիրքորոշումների, կարողությունների գարգացմանն ուղղված ազդեցության միջոց:

Մեկ այլ բնորոշման մեջ, որն առաջարկել է Գ. Ա. Կովայովը, սոցիալ-հոգեբանական թրենինգը ներկայացվում է որպես սոցիալական ուսուցման կոմպեքսային դիդակտիկ ուղղության ակտիվ մեթոդ: Մասնավորապես Դ. Պարիգինի կողմից սոցիալ-հոգեբանական թրենինգը դիտարկվում է որպես խճային խորհրդատվության, կենսական գիտելիքների ձեռք բերման և հասարակական լյանքի սկաժ մասնագիտական ունակություններից մինչև սոցիալական դերեր, ես-կոնցեպցիայի ու ինքնազնահատականի շտկման, ունակությունների ձևավորման մեթոդ:

Սոցիալ-հոգեբանական թրենինգը ընկալվում է նաև որպես մարդու, խմբի, կազմակերպության հոգեբանական ֆենոմենի նպատակային փոփոխության բազմաֆունկցիոնալ մեթոդ:

Յու. Ն. Եմիլյանովի կողմից առաջ է քաշվում նաև այն համոզմունքը, որ սոցիալ-հոգեբանական թրենինգի, որպես ուսուցման հոգեբանական մեթոդի, ընթացքում ձևավորվում է անձի հաղորդակցական կոմպիտենտայնությունը: Այն տալիս է յուրասիրակ սոցիալական փորձ, որը թույլ է տալիս անձին կարճատև ժամանակահատվածում ձեռք բերել առավել կատարյալ սոցիալ-հոգեբանական բովանդակություն [4]:

Վերոնշյալ բնորոշումների միջև գործակեռներ անցկացնելով՝ կարող ենք ընդհանրացնել, որ հոգեբանական թրենինգները նպատակ ունեն ուսուցմանելու, զարգացմելու, սովորեցնելու: Մի նպատակ, որը դրվագ է յուրաքանչյուր կրթական հաստատության և, առաջին հերթին, դպրոցների արջուն: Հանգամանք, որը թույլ է տալիս փաստելու, որ թրենինգը՝ որպես մեթոդ, կարող է իր արժանի տեղը գրադարձնել նաև մանկավարժական հոգեբանության մեթոդոլոգիայում և կիրառվել նաև հանրակրթության ոլորտում: Դիտարկելով, մասնավորապես, սոցիալ-հոգեբանական թրենինգները որպես գործնարար և ս. Միկվինը առանձնացնում է դրանց երեք հարաբերական ինքնուրույն ենթագործվածներ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր դետերմինանտները, ազդեցության միջոցները: Ըստ հեղինակի՝ այդ ենթագործվածներն են՝ ուսումնական գործընթացը, խճային դիմանմիկան և անձի զարգացումը: Ընդ որում, և. Միկվինը դրանցից առաջնային է համարում ուսուցման գործընթացը, իսկ մյուս երկուսը դիտարկում է որպես լրացուցիչ [5]:

Սակայն թրենինգը՝ որպես ուսուցման մեթոդ դիտարկելու պարագայում կարևոր է անդրադարձական ինքնին հասկացությանը և այն առանձնացնել նրան մոտ այնպիսի հասկացություններից, ինչպիսիք են՝ սովորեցումը, կրթությունը և զարգացումը: Այս հարցին անդրադարձել են Ռ. Բակլին և Զ. Կեյլը: Նրանք առաջարում են հետևյալ բնորոշումները.

Թրենինգ /*training*/ իրենից ներկայացնում է ծրագրավորված և սիստեմատիկ ջանքերի ընդհանրություն, որոնք ուղղված են սովորեցման միջոցներով մարդու գիտելիքների, ունակությունների և դիրքորոշումների զարգացման մոդիֆիկացմանը՝ այս կամ այն գործունեության տեսակի արդյունավետ կատարման նպատակով: Գործնական իրադրությունում թրենինգը ուղղված է նրան, որ մարդուն հնարավորություն տրվի

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ձեռք բերել գիտելիքներ և ունակություններ, որոնք անհրաժեշտ են կոնկրետ խնդրի կամ աշխատանքի աղեկվատ կատարելու համար:

**Սովորեցումն/*Learning*/** առավելապես գիտելիքների, կարողությունների և ունակությունների ձեռք բերման գործընթաց է՝ փորձի փոխանակման, հետազոտությունների միջոցով:

**Կրթությունն/*education*/** գործունեության մեջ սահմաններից դուրս եկող համակարգված գիտելիքների, կարողությունների, արժեքների և պատկերացումների յուրացման և մշակման համակարգ է, որը թույլ է տալիս լուծել խնդիրների առավել լայն սահմաններ:



**Զարգացումն/*development*/** բնորոշվում է որպես գիտակցված կամ չգիտակցված ուսուցման միջոցով մարդու կարողությունների և ընդունակությունների ընդարձակում և աճ [6]:

**Glossary of Training Terms /1978/-ի մեջ «Թրենինգ»** տերմինին տրվում է այնպիսի բացաստրություն, ըստ որի՝ «սովորեցման միջոցով» բարակապակցությունը մատնացույց է անում թրենինգի և ուսուցման միջև կոնկրետ սահմանի բացակայությանը և շեշտվում է այդ երկու հասկացությունների միավորման անհրաժեշտությունը: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ վարժեցումը և ուսուցումը սուր փոխկապակցված են: Գիտելիքներ, կարողություններ և դիրքորոշումներ ձեռք բերելու մարդու ընդունակությունը թրենինգի գործընթացում կարող է ուղղակիորեն կամ կողմանկի կերպով կախված լինել նրա նախկին ուսուցման որակից, կրթվածության մակարդակից և ունակություններից: Առավել ևս, խոսելով թրենինգի և ուսուցման մասին, չի կարելի երկրորդական պլան մուտք կամ էլ զննահատել սովորման և զարգացման ևս մեկ բաղադրիչ, իսկ ավելի կոնկրետ, գործնական փորձը: Կազմակերպչական թրենինգի և ուսուցման համար անհրաժեշտ պայման է այդ տարրը: Ներևս ոչ հեռու անցյալում պլանավորված փորձին հաճախ երկրորդական դեր էին Վերագրում: Ներկա ժամանակներում առավել լայն տարածում է գույն այսպես կոչված «սովորեցումը գործողության մեջ» հասկացությունը, որը բացատրվում է որպես կազմակերպման, իրական խնդիրների լուծման փորձի միջոցով սովորեցում: Այլ կերպ ասած, եթե, օրինակ, կրթական հաստատությունում ուսուցիչը միայն խոսրով է բացատրում սովորողին, ասենք, որևէ վարքագիր դրական և բացասական կողմերը, հնարավոր հետևանքները, ապա գործողության մեջ սովորեցումը թույլ է տալիս յուրացնել տվյալ գիտելիքը ոչ թե վերացարկված, այլ կոնկրետ գործողությունների միջոցով, այնպիսի հնարավոր իրադրության ժամանակ, որում կարող է հայտնվել սովորողն իրական կամքում:

Եթե խոսենք յուրասիհպության մասին, ապա վարժեցումը /թրենինգը/, սովորաբար ենթադրում է կոնկրետ աշխատանք կատարելու համար անհրաժեշտ վարքային ունակությունների, փաստերի, տեսակետների և այլնի մշակում ու յուրացում: Վարժեցման օբյեկտ է հանդիսանում գործունեության կոնկրետ ծեզ, այլ ոչ թե մարդու: Իսկ ուսուցումն առավել ուղղված է մարդու վրա և ենթադրում է առավել լայն փոփոխություններ՝ ուսուցման նպատակներին կոնկրետ բնորոշումներ տալն առավել դժվար է: Վարժեցումը հակարդելով ուսուցմանը Գլեյզերը /Glaser/ 1962/ գրում է. «... այն դեպքերում, երբ սովորեցման վերջնական արդյունքը կարող է դասակարգվել աշակերտի ցանկալի վարքի կոնկրետ օրինակներով, հնարավոր է մշակել նման վարքի ձևակորմանը կամ մարզմանն ուղղված արողեղությանը: Իսկ եթե խոսքը վերաբերում էնրան, որ մարդուն տրվի կոմպեքսային կարողություն, որը դժվար է բաժնել առանձին բաղադրիչների և ցուցադրել կատարման կոնկրետ օրինակներով, ապա անհրաժեշտ է առավել լայն ուսուցում, որի ժամանակ աշակերտներին գինում են իրավիճակին համապա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

տասխան ընդհանուր մոտեցումներով՝ հուսալով, որ նրանք դրանք կօգտագործեն նման կամ ուրիշ իրավիճակներում»: Թթենինգի և կրթության միջև տարբերությունները գեյզերը վեր է լուծում նաև անհատական տարբերությունների մինիմալիզացման և մաքսիմալիզացման տեսանկյունից: Նա համարում է, որ թթենինգը որպես ուսուցում, վարքի ներ յուրատիպ ծե, ենթադրում է գոյություն ունեցող անհատական տարբերությունների սահմանների միասինական որոշակի աստիճան: Կրթությունն, ընդհակառակը, ենթադրում է աշակերտի անհատականության խրախուսում ուսուցումը կազմակերպվում է այնպես, որ արդյունքում յուրաքանչյուր աշակերտ նշակում է այս կամ այն գործունեության սեփական միջոցները: Թթենինգը և կրթությունը /զարգացման հետ միասին/ կարելի է նաև համեմատել գործընթացի տեսանկյունից: Վարժեցումն իր ժայռահետ ձևերով բավականին մեխանիկացված գործընթաց է, որն ուղղված է վարքի միատեսակ և գուշակելի սիսեմաների մշակմանը՝ ձեռք բերվող կարողությունների բազմաթիվ կրկնությունների և մարզումների միջոցներով: Իսկ կրթությունն առավել բնական գործընթաց է, որը մարդու մեջ առաջացնում է ավելի քիչ նախատեսների փոփոխություններ /նույն տեղում, էջ 17-18/: Վերոհիշյալ տարբերություններն ունեն հետևյալ սիսեմատիկ տեսքը /գործընթացի և արդյունքի տեսանկյունից/



Ավանդական ուսուցման ձևերից սոցիալ-հոգեբանական թրենինգի տարբերակից հիմնական գծերից է հիմնարար սկզբունքների առկայությունը, որոնց պետք է հետևի հոգեբանը: Դրանց կիրառման հերթականությունը սոցիալ-հոգեբանական թրենինգների անցկացման ժամանակ ապահովում է որակական տարբերություններ ուսուցման այնպիսի ավանդական միջոցներից, ինչպիսիք են, օրինակ դասախոսությունները, գործնական պարապմունքները, գրականության ընթերցումը:

Ուսուցումն ընդունված է դիտարկել որպես յուրացման գործընթաց: Թթենինգների ընթացքում ևս կատարվում է գիտելիքների, հնտությունների, կարողությունների յուրացում: Ի տարբերություն ավանդական ուսուցման ձևերի՝ թթենինգում յուրացումը կա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

տարվում է իմիտացիաների միջոցով: Վարժեցման և ուսուցման կապը կարելի է տեսնել նաև այս ասաելուում, եթե, հատկապես, մեղքերենք Վ. Յառադիսի հոգեբանամանկավարժական գործունեության կոնկրետ հարցերի, օրինակ, աշակերտ-ուսուցիչ կապի վերաբերյալ մոտեցումը, որի համաձայն՝ կրթության ավանդական համակարգում յուրացման գործընթացի կազմակերպումն օրինականացրել է առավելապես ուսումնական փոխազդեցության մեկ առաջատար ծև: Դա այնպիսի փոխազդեցություն է, որտեղ կորուկ բաժանված ու բնեուացված են աշակերտի և ուսուցիչ դիրքերը: Աշակերտի ակտիվությունը բխում է ուսուցիչ գործողություններից: Իմիտացիայի տիպով ուսումնական փոխազդեցությունն առաջացնում է փորձի յուրացման համապատասխան ծև՝ առավել ռեալորդուկտիվ, ինչը բնութագրական է ուսուցման բոլոր փուլերի համար՝ սկզբից մինչև վերջ [7]:

Լ. Ա. Պետրովսկայան նշում է, որ «ինչ սովորեցնել» և «ինչպես սովորեցնել» հարցերին տրվող պատասխանների տեսանկյունից թրենինգը տարբերվում է ուսուցման խնդրի ավանդական մոտեցումներից[8]: Բայց դա չի նշանակում, որ թրենինգը՝ կրելով որոշակի տարբերակից որակներ, որպես ուսուցման մեթոդ տեղ չունի կրթական հաստատություններում: Ընդհակառակը, վերջինիս կիրառումը թույլ կտա գործնականորեն ամրապնդել արդեն իսկ յուրացրած տեսական գիտելիքները, կարողությունները և ունակությունները: <Նարավոր է նաև, որ թրենինգի կիրառումը նպատակ ունենա ստեղծելու համապատասխան դաշտ սովորեցման, ու դաստիարակման գործընթացն ավելի նպատակային կազմակերպվի: Խոսելով կրթական ոլորտում թրենինգի կազմակերպման հնարավորությունների մասին՝ անհրաժեշտ է նշել, որ պետք է ճիշտ ընտրվի վարժեցման տեսակը, քանի որ թրենինգները տարբերվում են ըստ կիրառման նպատակների, ըստ կարուցվածքայնության, ըստ թրենինգային խնդիր մասնակիցների թվի և այլն: Եթե կրթական միջավայրում նպատակ ունենք կիրառել վարժեցումը սովորողների հոգեշտկման համար, ապա պետք է ընտրենք հոգեշտկողական թրենինգներ: Ավագ դպրոցում թրենինգների կիրառումը կարող է ծառայեցվել աշակերտների կողմից սեփական հնարավորությունների բացահայտմանը, ինքնագիտակցության բարձրացմանը և այդ ձանապարհով ճիշտ մասնագիտական կողմնորոշվածության հասմելուն: Իսկ, օրինակ, ներառական կրթության պարագայում, որտեղ կարևորվում է մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների ինտենգրումը հասարակությանը, նպատակային է կիրառել հաղորդակցման և շփման կոնյակի տեսայնության բարձրացմանը ուղղված թրենինգներ: <Աճախ աշակերտների ուսումնական առաջադիմության ցածր մակարդակը պայմանավորված է լինում նրանց ցածր ինքնագնահատականի, անվստահության, ինքնամնիկության, ներուժի միավոր ուղղվածության և հոգեբանական, անձնային մակարդակում նման այլ խնդիրների առակայությամբ: Նման պարագայում թրենինգային աշխատանքները կարող են առավել քան արդյունավետ լինել:

Բացի այդ թրենինգը կարող է նպատակային լինել ոչ միայն սովորողների, այլ նաև սովորեցնողների, օրինակ, ուսուցիչների հետ տարվող աշխատանքներում: Եվ այս դեպքում կարող են կիրառվել մասնագիտական ունակությունների գարգացմանն ուղղված վարժեցումներ:

Նման ձանապարհով սոցիալ-հոգեբանական թրենինգը, տարածված լինելով որպես սոցիալական հոգեբանության մեթոդ, կարող է իր տեղը գրադարձնել նաև մանկավարժական հոգեբանության մեթոդորդիայում և հանդիսանալ նոր խոսք հոգեբանական գիտության այս ճյուղում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Бука Т.Л., Митрофанова М. Л. Психологический тренинг в группе. Учебное пособие. М., 2005, стр. 4
2. Исурина Г.Л. Групповые методы психотерапии и психокоррекции// Методы психологической диагностики и коррекции в клинике/ Под ред. М. М. Кобанова. Л., 1983, стр. 231-254
3. Петровская Л. А. Компетентность в общении. Социально-психологический тренинг.М., 1989, стр. 5
4. Емельянов Ю. Н. Активное социально-психологическое обучение. Л., 1985, стр. 128
5. Миккин Х. Цели, процессы и методы видеотренинга руководителей // Человек, общение и жилая среда. Таллин, 1986, стр. 13
6. Бакли Р., Кейпл Дж. Теория и практика тренинга, 4-е международное издание. П., 2002, стр. 15-16
7. Лядис В.Я. Структура продуктивного учебного взаимодействия //  
Психолого-педагогические проблемы взаимодействия учителя и учащихся. М., 1980,  
стр. 38–39
8. Лариса Андреевна Петровская Общение – компетентность – тренинг: избранные  
труды стр. 77. Издательский текст [http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=3459325](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=3459325)  
«Общение – компетентность – тренинг»: М., 2007.

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Հոգեբանական թրենինգի կիրառման առանձնահատկությունները**

**Կրթության ոլորտում**

**Արմինե Աղյան**

Դասախոսությունների, քննարկումների, գործնական պարապմունքների կողքին թրենինգները զբաղեցնում են իրենց արժանի տեղը ուսուցման ակտիվ ձևերի շարքում: Ուսուցման այս իննովացիոն մեթոդի հիմքում ընկած է խմբային հոգեբանական աշխատանքը: Թրենինգի տարրերը բնորոշումների միջև զուգահեռները մատնացույց են անում, որ հոգեբանական թրենինգները նպաստակ ունեն ուսուցանել, զարգացնել, սովորեցնել: Թրենինգը, տարածված լինելով որպես գործնական հոգեբանության մեթոդ, կարող է իր տեղը զբաղեցնել նաև տարիքային և մանկավարժական հոգեբանության մեթոդուղղիայում:

**Բանալի բառեր՝ կրթություն, զարգացում, ուսուցում, մեթոդ, մեթոդուղղիա, կրթական ոլորտ, թրենինգ/վարժեցում, ուսուցման ակտիվ ձևեր, հոգեբանական խմբային աշխատանք:**

**РЕЗЮМЕ**

**Особенности использования психологического тренинга в сфере образования  
Армине Алоян**

Наряду с лекциями, дискуссиями, семинарами, тренинги занимают свое достойное место в системе активных форм обучения. В основе этих инновационных методов лежит групповая психологическая работа. Разные трактовки тренинга показывают, что целью психологических тренингов является обучение и развитие. Таким образом, тренинг может иметь свое достойное место в методологии педагогической психологии и стать новым словом в возрастной и педагогической психологии.

**Ключевые слова:** образование, обучение, развитие, метод, методология, активная форма обучения, групповая психологическая работа.

**SUMMARY**

**The peculiarities of the use of psychological trainings in the sphere of education  
Armine Aloyan**

Alongside with lectures, discussions and practical courses, trainings occupy their worth place in the series of types of teaching. Psychological group work is based on this innovative teaching method. But it is important to separate training from such concepts as teaching, education and development, which are too close to the concept of training. So, training can also occupy its place in the pedagogical psychological methodology.

**Keywords:** education, development, method, methodology, active form of education, training, psychological group work.